

որին թոյլ չէ տալիս ուրիշ բաների մասին խոսելու: Վարչութեան անդամ պ. Ս. Մամիկոնեանց, դառնալով դէպի նոյն երկու պարոնները, աշխատում էր նրանց համոզել թէ հաշի ուշանալը արդեւ չէ կարող լինել այս ընտրութիւններին: Ներկայումս, շարունակեց պ. Մամիկոնեանց, հանգուցեալ Բ. Թովնանեանցի մահի վախճանը, հարաւորապէս պատճառով, անհրաժեշտ է ընտրութեամբ լրացնել վարչութեան անդամները թիւը, ապա թէ ոչ շատ դժուար և անկասկած կը լինի արդի վարչութեան երկու, երեք անդամներով կառավարման գործերը առաջ մղել: Բայց կրկեց կուրացած կուսակցութիւնը ոչինչ չէր կամենում հասկանալ և միայն պնդում էր, թէ պէտք է նիստը փակել: Սակայն, ներկայ եղողները մեծամասնութիւնը սկսեց կտրական կերպով պահանջել, որ ընտրութիւնները սկսվեն: Ինչ և իցէ առաջին քուէարկութիւնը զանազան խոչընդոտներից յետոյ կայացաւ 36 ծխականների ներկայութեամբ, իսկ երկրորդ քուէարկութիւնը կատարվեց 34 ծխականների ներկայութեամբ:

Մինչդեռ արձանագրութիւնը խմբագրվում էր ծխականների ստորագրութեան համար, պ. Սուլթան-Շահը, այդ անսպառ հեղինակը զանազան ընկերութիւնների, ծրագրերի և անհուն և անընկալելի առաջարկութիւնների, հանդիսաւոր կերպով դուրս եկաւ ասպարէզ, հանեց ծոցից մի թուղթ և սկսեց կարդալ: Դողովը լսելով պարոնի կարդացածը, տեղեկացաւ թէ նա մի մասնաժողովի անդամ է, թէ այդ մասնաժողովը կազմված է 1885 թ. հանգուցեալ Սուրենեանց քահանայի մահաբանին համար նշանակուած ժողովուրդ և թէ նա, պ. Սուլթան-Շահը, անպակաս արդեւ ինքնին անդիպելով, հրաժարվում է անդամութիւնից և գովաբանելով իր անձնաւորութիւնը մի քարձակումն գործեց պ. պ. Գր. Խալաթեանցի և Սուրենեանցի վրա: Այդ քարձակումը այնքան անբարեբաղիւր և անտեղի կերպով էր, որ գործը անձնական ուղղութիւն ստացաւ, և ծխականներից շատերը դժգոհութիւն յայտնեցին: Բայց թէ ինչու պ. Նախագահը թոյլ տուեց կարդալ այդ բոլորը, որ ոչինչ կապ չուներ այդ օրվայ նիստի հետ, այդ մնաց զաղտնիք. երևում էր, որ պ. Նախագահը չէր ըմբռնում իր պաշտօնի նշանակութիւնը և չէր կարողանում զեկավարել ժողովը: Այս էր պատճառը, որ նոյն պ. Սուլթան-Շահը գործեց մի այլ անուղղութիւն. նա յայտնեց թէ պ. Զանուկեանց, եկեղեցական տները մէկի նորոգութեան համար

մի որոշեալ գումար է նուիրել, ուստի հրաւիրեց ծխականներին շնորհակալութիւն յայտնել պ. Նախագահին: Զարմանալի բան, հաշիւը դեռ ևս չէ հրատարակված, ոչոքի պաշտօնապէս ոչինչ յայտնի չէ, թէ պ. Զանուկեանց Թրք է մի գումար նուիրել և ինչ քանակութեամբ, և յանկարծ առաջարկում են շնորհակալութիւն արտայայտել նրան: Սակայն այդպիսի զարմանալի և անտեղի առաջարկութիւններ չառ եղան, և էլի մեծ մասամբ պ. Սուլթան-Շահի կողմից, մինչև որ վերջապէս արձանագրութիւնը ստորագրվեց և ծխականները 5 ժամին ցրվեցին դժգոհ ժողովի մէջ տեղի ունեցած մի քանի իրողութիւններից, որոնց շնորհով և տեղիս հասարակութեան մի մեծ մասը չէ յաճախում ընդհանուր ժողովներ:

ՆԱՄԱԿ ԱԽԱՂՑԱՅԻՑ

Մայիսի 17-ին

Մի տարօրինակ երևոյթ էր ներկայացնում մեր նոր իրաւասունների ընտրութիւնը. գոնէ անցեալ երեք քառամսկներին երբեք տեսնված կամ լսված չէին այն հետաքրքրութիւնը, իրարանցումը, դրդողը, լարված կրքերը և կուսակցութիւնները, ինչպէս այս անգամին: Մի փոքրիկ դադարի կազմելու համար, հետեւել հանգամանքները նկարագրելով պարզում է գաղտնիքը, թէ որպիսի սկզբունքով և կրքերով են զեկավարվում մեր գործողները: Ներկայ վարչութիւնը հէց առաջին տարում ցոյց տուեց, որ նա բաղադրված է այնպիսի տարրերով, որ երբեք համերաշխութիւն և կապ պահպանել իր մէջ անհնարին էր և հէց սկզբից տարաձայնութիւնը, հակասական դատապարտելի յարաբերութիւնները առիթ էին տուած նոյն իսկ վարչութեան մէջ երկու-երեք հակառակ կուսակցութիւնների կազմվելուն, և այդպիսի լարված դրութիւնից ամեն միջոց, իր հէջը չէր թողնում, քաղաքային շահերի պաշտպանութիւն էլ կասկածանքի տակ էր դրված: Վարչութեան ներկայացուցիչների մէջ եղած տարաձայնութիւնները չէին կարող լսանալ չորս պատերի մէջ, այլ դուրս ցատկեց արձագանքը հրապարակների վրա, զանվէրանանքում և եկեղեցու ճանապարհներում, անսպառելի պաշար ներկայացնելով «ասէ-կոսէներին», հանգամանքներին: Ճիշդ ծանօթ թէ անձնօթ բամբասանք սիրողներին: Եւ ահա մօտենում են ընտրութեան օրերը, կազմվում են բանակներ և ձակառամարտի ասպարէզի վրա կանգնած են այնքան մարդիկ,

թիւն հիմնելու գաղափարը: Այդ միտքը յայտնում է հանգուցեալ Մովսէս Զորարեան Զորարեանցին, որը համակրութեամբ վերաբերվելով այդ մտքին, դառնում է Ռոստոմեանցի ջերմ աջակիցը: Այնուհետև երկուսը միասին սկսում են համակրողներ և աջակցողներ գտնել և շուտով դրանց թիւը հասնում է 8-ի, որի վրա յետոյ աւելանում են 5, և այդպիսով կազմում են 13 հոգի հիմնադիր անդամներ: Ահա դրանց անունները և ազգանունները: 1) Թիֆլիսեցի բժշկապետ Գաւրիլ Զարուկի-նեան Ռոստոմեանց, 2) Թիֆլիսեցի Ալեքսէյ Արտեմիչ Տեր-Ղուկասեանց, 3) չուլեցի Ներսէս Նիկիտիչ Արասիկիսեանց, 4) չուլեցի Մովսէս Զորարեան Զորարեանց, 5) չուլեցի Գրիգոր Հայրապետեան Թամայեանց, 6) Մուսայէլ Գանի-էկեանց Շահդիդեանց, 7) Սարգիս Կիրիլիչ Ալվազեանց, 8) Սարգիս Տեր-Յովհաննիսեան Տեր-Գրիգորեանց, 9) չամախեցի Գէորգ-Էդ Գեորգեան Լալայեանց, 10) չուլեցի Զակարի Սահակեան Ապրիսեանց, 11) Գաւրիլ Թովհաննիսեան Աղաթեանց, 12) չուլեցի Օհանջան Գրիգորեան Չախումեանց, 13) Սարգիս Զարուկիսեան Գրիգորեանց: Սրանք բոլորը միասին վեր են գալիս 12,650 ռուբլի: Սրանց յետոյ յանձնվում է Ռոստոմեանցին և Զորարեանցին կազմել ընկերութեան կանոնադրութիւնը, որը և բարձրագոյն իշխանութիւնից հաստատվում է 1864 թ. մայիսի 21-ին:

Այս կարճատև կենսագրական մի քանի վրաստեղ և ընկերութեան ծագման մասին տեղեկութիւն տալուց յետոյ դիմենք նրա գործունէութեան. բայց այս դէպքում թող թուանշանները իրանք խօսեն: 25 տարվայ ընթացքում ընկերութիւնը մուտք ունեցել է 185,324 ռ. 33 կ., որը ստացվել է հետեւեալ աղբիւրներից. 1) 13 հիմնադիր անդամներից (12,650 ռ. փոխարէն).... 9,680 ռ., 2) չորս պատուաւոր անդամներից 4,000 ռ., 3) 317 անփոփոխ անդամներից 32,625 ռ., 4)

869 տարեկան անդամներից 4,459 ռ., 5) զբաղակալի տոկոսը և արդիւնք վաճառականութիւնից 62,294 ռ. 41 կ., 6) կտակած գումարներ 4,250 ռ., 7) նուիրաբերութիւններ 4,954 ռ. 94 կ., 8) ներկայացումներից 2,763 ռ. 13 կ., 9) տպարանից եկամուտ 5,397 ռ. 81 կ., 10) տպարանի վաճառումից 675 ռ., 11) յիւնութեան նկուղուց և անեակից վարձ 2,955 ռ., 12) ձեռագործների վաճառումից 1,298 ռ. 6 կ., 13) գրքերի վաճառումից 106 ռ. 19 կ., 14) աշակերտներից թոշակադրում 1,340 ռ., 15) չոգնիսականից արդիւնք 1,025 ռ., 16) չոգնիսականի վաճառումից 1,200 ռ., 17) ծխական հողաբարձութիւնից 13,341 ռ. 65 կ., 18) նոր շինութեան համար ժողոված գումար 29,636 ռ. 99 կ., 19) պայմանաւոր գումարներ 1,490 ռ. 84 կ., 20) գրադարանական գումար 1,977 ռ. 72 կ. և 21) անյայտ աղբիւրներից 883 ռ. 53 կ.:

Այդ ժամանակամիջոցում ծախս եղել է ընդամենը 122,623 ռ. 10 կ. հետեւեալ պէտքերի վրա, 1) Բազուրի դպրոցների վրա 48,147 ռ. 33 կ., 2) գիւղական և քաղաքային դպրոցներին նպաստ 7411 ռ. 10 կ., 3) Որդեգրաց օժանդակութիւն 14,645 ռ. 30 կ., 4) Ողորմութիւն արքայազն Բազուրի, Գանձակի, Սամարայի և Զուլայի՝ 2099 ռ. 22 կ. 5) Տան վարձ դպրոցների և դրատան համար 1635 ռ., 6) Տպարանի վրա ծախսեր 7447 ռ. 49 կ., 7) Հին շինութեան վրա ծախսեր 7715 ռ. 93 կ., 8) Շինութեան կարկառանքների վրա 4600 ռ. 31 կ., 9) Նոր շինութեան վրա ծախս 15,370 ռ. 53 կ., 10) Գրատան վրա ծախս գրքերի, լրագրերի և այլն 5544 ռ. 81 կ., 11) Գործավարական և տնտեսական ծախսեր 5332 ռ. 18 կ., 12) Բանկին տոկոս 2321 ռ. 10 կ., 13) Անակունեւի ծախսեր 362 ռ. 80 կ. օպէկ:

Ուշիմ ընթերցողը վերոյիշեալ ծախսի հաշիւից պարզ կը նկատի, որ ընկերութեան գործունէութիւնը բազմակողմանի է եղել. նա մի և նոյն

որ շուտով էին թէ նեւ տը Թրք դէմ պէտք է ուղղել. ուստի իւրաքանչիւր անդամն ձգտում էր իր կողմը շահել որքան կարելի է շատ մարդիկ, իր բանակը զօրեղացնելու համար, և սկսեցին գործ դնել զանազան տեսակ թէ ներքին և թէ անհեղին միջոցներ, սպառնալիք, դրամ, խնամութիւն, խնջոյք, մինչև հասան ընտրութեան օրերը, երբ իւրաքանչիւր բանակ վստահ էր յաղթանակը տանելու: Կայացաւ առաջին կարգի ընտրողների ժողովը. յաղթութիւնը երկու ուստի էր միացեալ կուսակցութիւնների կողմն էր. հասաւ հերթը երկրորդ կարգին. այս անգամ յաղթվեցան առաջինները, մնում էր վերջին վճռողական ձակառամարտը, որով մեր քաջամարտիկ զինուորները լուծելու էին զօրեղան հանդիպում: Երբեք առաւօտից խռոված էին հարկերաւոր մարդիկ «Ռոսիա» հիւրանոցի շուրջը և ներսը դահլիճում. աղմուկ և վէճ. նիստը բացվում է և յայտնվում, որ ընտրողների ստուար մասը ոչ թէ անփական ցեղեղբով պէտք է մասնակցեն, այլ հաւատարմալից լինելով, առանց պաշտօնական վաւերացման. բողոքում են այդ թղթերի դէմ, ինքնավարութեան նախագահը չէ երաշխաւորում առանց նօտարի կամ պօլիցիայի վաւերացման, միմիայն վարչութեան մի անդամի վկայութիւնը պաշտօնական վաւերացում չէր կարելի համարել. խնդիրը լուծարվում է և բոլոր այն անձինք, որոնք մասնակցելու էին հաւատարմալից լինելով, առանց պօլիցիայի կամ նօտարի վաւերացման, զրկվում են ձայների իրաւունքից: Հազիւ հազ երեկոյան հինգ ժամին կարգը վերականգնում է և սկսվում է ձայնաւորութիւնը: Այսօր, առաւօտեան վեց ժամին, վերջապէս յայտնվեց քուէարկութեան արդիւնքը, որով միացած կուսակցութիւնները իսպառ յաղթող են հանդիսանում: Առայժմ ընտրված են 42 ձայնաւորներ:

Բազան

ՆԱՄԱԿ ԱՂԱՏԱՅԻՑ

Մայիսի 22-ին

Երկու շաբաթ է որ անգրկովկասեան երկաթուղու գծի վրա երթևեկութիւնը բոլորովին անկանոն է դարձել: Այսօրվան Բազուրից եկող գնացքը լի էր բազմաթիւ ճանապարհորդներով, որոնք ժամողջ վեց օր, այսինքն 144 ժամ, համբերութիւն էին ունեցել Ուշար կայարանում 40 աստիճան տաքութեան և միլիոնաւոր մոծակների մէջ սպասելու: Ուշարի «Ռոֆեալիկը» ևս իր

հերթում յետ չէ մնացել մոծակներից և եթէ առաջինները ծծում են եղել այդ խեղճ ակամայ բանտարկեալների արիւնը, այդ վերջինը օդուտ քաղելով հանգամանքից կերակրի մի բաժինը 50 կօպէկով է ծախելիս եղել, ուստիների գրպանները թափ տալու նպատակով: Ուշարից մինչև Լեւաք դիժը ամբողջ 17 վերստ փչացած է եղել, որը մեծ նեղութեամբ կարողացել են մի կերպ պատրաստել և ցնացքը քայլ առ քայլ վրայից անցկացնել: Շատ տեղեր դիժը բոլորովին ծածկված է եղել ջրի տակ:

Անցեալ տարի, Կուրի բարձրացած ժամանակ, Եւրասի ինժեներներից մէկը կամուրջը ջրից պահպանելու համար, ջրի հոսանքը բաց էր թողել դէպի Եւրասիւս ապրող մարդկանց բնակարանները, որոնք մի երկու օրվան մէջ բոլորովին հիմնադատակ էին եղել: Վնասվածները բողոքեցին կառավարութեան. իսկ երկաթուղու վարչութիւնը պարզաւորեց ճարպիկ ինժեներին: Բայց այս տարի Եւրասի ինժեներները աւելի մեծ խելօքութիւն են արել, ինչպէս պատում են: Կամուրջը անվնաս պահպանելու համար ջրի հոսանքը այս անգամ արել են դէպի միւս կողմ, որտեղ ապրում են գիւղացիներ, և մօտ չորս գիւղեր մնալով են սարսափելի կերպով լիցել: Եւրասի կոմիտեները անցեալ տարի կառավարութեանը զանգուտվելով աջողեցան իրանց դատը պաշտպանել, այս տարվան այդ խեղճ ինժեներները երկի շատ լաւ դիտեն, որ այդ բանը գիւղացիները չեն անի, և երկաթուղու վարչութիւնն էլ աղտո կը լինի աւելորդ գլխացաւանքից:

Երկու տարվանից աւելի զտնվելով կայարաններում, միշտ նկատել ենք, որ մեր երկաթուղին երբեք չէ կարողանում անձրևների դիմանալ. հէց մի փոքր աւելի անձրև եկաւ թէ չէ, գնացքները ամբողջ օրերով սկսում են ուշանալ և ինժեներ-թէվիզիոները առաջին կարգի վազոններում սկսում են դէս ու դէն վազել և յուսահատվել: Բայց յուսահատվելու փոխարէն, պէտք է հիմնական բարեփոխութիւններ անել երկաթուղու գծի շինութեան և կարգ ու կանոնների մէջ: Ապա թէ ոչ փոքրիկ անձրևներն անգամ միշտ կարող են վտանգ սպառնալ:

Ա. Ապ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Երբեք, մայիսի 29-ին, պ. Գրիգոր Արծրունի ուղևորվեց դէպի Պարիզ:

և կառավարվում է առանձին յանձնաժողովով, որի գործունէութեան շնորհով տարուց տարի նա առաջանում է:

Շարունակեք յօդուհանի նկարագրութիւնը: Պատկերացնելով ընթերցողից յետոյ պ. Կարա-Մուրադի խումբը երգեց այդ օրվայ առիթով յօդուհան երգը, որ կազմել է պ. Հ. Ղուկասեանց, իսկ եղանակի և տեղանքի պ. Կարա-Մուրադան: Նշանակել շատ գուրեւան է. դրա համար պ. Կարա-Մուրադան ստացաւ ընկերութեան նախագահից մի երաժշտական փոքրիկ գաւազան ոսկեղօծ ծայրերով: Այնուհետև կարգադրեցան յօդուհանի առիթով ստացված թէ հեռագրիները, թէ ուղերձները և թէ ոտանաւորները: Ստացվել են 22 հեռագիր, 6 ուղերձ և 4 ոտանաւոր: Խօսվեցան և մի քանի ձևեր: Գրանց ընդմիջում էին երգերը, որոնք շատ ներդաշնակ էին երգվում երաժշտութեան հետ: Հասարակութիւնը ընդունում էր այդ բոլորը ծափահարութեամբ: Հանդէսը վերջանալուց յետոյ հասարակութիւնը դիմեց ձեռագործներով զարդարված ուսումնարանի դահլիճը՝ նախելու և գնելու: Մինչև հասարակութիւնը դրադված էր ձեռագործներին նայելով, դուրսը պատշաճ վրա և նախանենակում երկուստեքները համակրական ցոյցեր էին անում ընկերութեան նախագահին, ճառ ասողներին և Կարա-Մուրադային: Վերջացնելով մեր խօսքը Մարդասիրական ընկերութեան յօդուհանի մասին, մեզ մնում է ցանկալի, որ այդ տնայնութիւնն քաղցր տպաւորութիւնը երկար մնա հասարակութեան սրբատու, ցանկանալով մի և նոյն ժամանակ, որ ընկերութիւնը ապագայում գործէ աւելի լայն շրջանակով, բոլորովին նոյն իսկ իր յիմնաւնայ և հարկաւանայ յօդուհանները:

Ա. Վ.—Գ.

Կ. ՊՈԼՍԻՑ մեզ գրում են. «Երուսաղէմի Յա-
րութիւնն պատրիարք արդէն Երուսաղէմ հասած
ըլլալու է, վասն զի «Արեւելքի» հեռագիր մը կը
ծանուցանէ թէ մայիսի 19-ին արդէն հասած է
Երուսաղէմ: Յարութիւնն պատրիարք իրեն հետ ունէր
բազմաթիւ ուղեկիցներ: Պոստիս ընկերացան
նրան խորէն Նար-պէյ, Յակոբ վարդապետ Աշոտ,
Թուրեան էֆէնդի և «Արեւելքի» խմբագրութիւնից
իբր թղթակից պ. Տիգրան Արքիեպիսկոս: Յա-
րութիւնն պատրիարք փառաւոր ընդունելութիւն
գտած է Իզմիր և Ալէքսանդրիա: Երբ Երուսաղէմ
հասած է իրեն ընդառաջ գնացեր են հայոց, յու-
նաց, լատինաց եկեղեցականք: Սկիզբն առնալ
ընթացք օրը Սուլթանը 250 ոսկի տուաւ նմա
իբր ծանապարհածախս Պարտուց խնդիրն ալ
գրեթէ կարգադրուած է, մասամբ փոխանակա-
գիր, մասամբ ստակ տրուելով: Գրեթէ 25.000
ոսկի տրուած է: Գեռ աչքան ալ պարտք կը
մնայ Երուսաղէմի վանքին վրայ»:

Մեր քաղաքի շուկաներում տիրապետող վարք
ու բարքի մասին հետեւեալ նկատողութիւնն
ուղարկված մեզ. «Ինչպէս յայտնի է, պանիրը
մեծ գործածութեան մէջ է թիֆլիսի աղաքանա-
կութեան մեծ մասի, այն էլ աղքատ դասակար-
գի մէջ. տարաբաղաւոր պանիրը այս տարի
անհամեմատ թանկ է միւս տարիներէից, չարչի
կէտտութիւն և առեւտրական պոլիցիայի անհոգու-
թեան շնորհիւ: Առաւօտեան հրապարակ են բե-
րում գիւղերից անաղին քանակութեամբ պանիր:
Եթէ պանիրաւորներն խօսեցնում էք՝ կամ կին-
տոյ անամօթ հայհոյանքին էք ենթարկվում, և
կամ թէ չէ, գնահատում են պուրը 6—7 ռուբլի:
Հատ անգամ էլ պատասխանը լուծվում է: Հա-
րատուված թողնում էք և դատարկ յետ դառ-
նում: Անցնում է ժամի 12-ը՝ ինչնում են կա-
խարդակաւ դրօշակը և անհամեմատ անկեղծա-
թեամբ վրա են թափվում թիֆլիսի թաղաքակա-
նիկներին և առանց խօսելու, առանց «բարի-
շուք» վեր են ածում դարձում թաղաքանե-
րում, և ծախում պուրը 4 ռ. 50 կոպէկից մինչև
6 ռուբլի: Հանելուկը լուծվում է այսպէս: Կին-
տոները արդէն օր առաջ գնում են քաղաքից
դուրս, միջրը բերողի հետ պայմանաւորվում են,
ընկերանում և վերադառնում քաղաք, սպասում
են մինչև դրօշակը իջնում և անհոգեմբ և ի-
րանից քանք համաձայն պուրում են խնդր ժողո-
վողին, այդպիսով հարստանալով նոյն իսկ ամ-
բողջ աղաքանակութիւնը. իսկ ինչ է անում առե-
ւտրական պոլիցիան և ինչ է նրա դերը,—այդ
միայն իրան է յայտնի»:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ արդա-
րացի նկատողութիւնը. «Վերջին ժամանակներում
յաճախակի պատահում ենք լրագրութեան մէջ մի
տարորինակ ձևի յայտարարութեան. «Требуется
привезти к нам кассиръ и այլն съ залогомъ въ
600 руб.» (հարկաւոր է մի գործակատար կամ
գանձապահ 600 ռուբլի գրաւակալով) և սոյնա-
նման յայտարարութիւններ, որոնք դուք մասամբ
օգնէին յայտարարող պարոնի դատաւարի աւե-
լանալուն, բայց, անկասկած, բարոյապէս և թէ
նիւթապէս մեղադրում են ամեն մի աղին գործա-
կատարի մէջ հաւատարմութեան և բարոյակա-
նութեան սկզբունքը, որոնցով մեծ հարուած են
տալի թէ գործակատարների շահերին և թէ վա-
ճառական դասակարգի օգտին: Անհրաժեշտ ճշ-
մարտութիւն է, որ վաճառականութիւնը և գործա-
կատարութիւնը փոխադարձաբար կապ ունեն մի-
մեանց հետ թէ բարոյական և թէ նիւթական տե-
սակէտից: Իսկ վերոյիշեալ ձևի յայտարարութիւն-
ները բաց են անում այդ երկու համերաշխ աշխա-
տող դասակարգերի մէջ մի անագին վիճ, և բաց են
անում ամեն անհատատարի գործակատարի առջև
գործելու լայն ասպարէզ, հաւատարմ, բայց
անգրաւական գործակատարին սպանում են թէ
բարոյապէս և թէ նիւթապէս Որովհետեւ գրաւա-
կանով գործակատարական պաշտօն ձեռք բերե-
լու համար ամեն մի անագին անձն, խորագրի
ծանապարհով ձեռք բերելով մի որոշ գումար, կա-
րող է ամեն տեղ գրաւակալով պաշտօն դառ-
նել, իսկ ամենապակաս գործակատարները՝ որոնք
մի քանի տասնեակ տարիներ ամենայն հաւա-
տարմութեամբ գործակատարի պաշտօններ են
վարել այս և այն վաճառատներում, գործարան-
ներում, և բաղդի բերմամբ անգործ և առանց
ապրուստի են մնացել, հաւանական է որ կարող
են քաղցած մնալ: Այդպիսի կորստաբեր ուղղու-
թեան դիմելով մեր վաճառականներից ոմանք և

միւսներին դայթակողութեան պատճառ դառնա-
լով, սպանում են նրանք գործակատարի մէջ հա-
ւատարմութիւն և սէր թէ ղէպի գործը և թէ
ղէպի գործակատարական պաշտօնը: Ասացէք
ինչդրեմ, որ աղին և հաւատարմ գործակատա-
րը կը խելագարվէր 600 ռուբլի գրաւական տա-
լով ստանալ տարեկան 3—400 ռուբլի առճիկ,
այն էլ թիֆլիսի նման մի քաղաքում, որտեղ
ապրուստի և կենսական պիտոյքների անհամե-
մատ թանկութիւն է: Այդպիսի միջոցների դիմե-
լը չէ նշանակում արդեօք կողմնակի կերպով
գործակատարներին խորհրդակցութիւն և գողու-
թիւն սովորեցնել, ոչնչացնելով գործակատարի և
վաճառականի մէջ գոյություն ունեցող փոխա-
դարձ հաւատարմութիւնը և հաւատը»:

Մեզ հաղորդում են հետեւեալ մի քանի կար-
գաղութիւնների մասին, որոնք պէտք է գործա-
դրվեն հայոց դպրոցների մէջ: Մի դասեան
դպրոցները պէտք է ունենան ընթերցարան, որոնցից
մէկը միայն պէտք է լինէ՝ մէկը ծխական
մնացած երկուսը պէտք է լինեն՝ մէկը ծխական
քանանան, իսկ միւսը ծխական լիկեզիոս երե-
փոխը: Երկրորդ դասեան դպրոցները պէտք է ու-
նենան չորս հոգաբարձու, մէկը ծխական քանա-
նան, միւսը եկեղեցու երեցփոխը, իսկ մնացած
երկուսը պէտք է ընտրվեն ժողովրդի կողմից:
Հոգաբարձութեանը յանձնվում է գլխավորապէս
դպրոցների տնտեսական մասը: Գաղութների
առաջ ուսուցչին կամ տեսչին որոշում և հաստա-
տում է թեմական առաջնորդը, իսկ ուսուցչա-
կան խմբերի կազմը ամբողջապէս յանձնվում է
առաջ ուսուցչին իրեն կամ տեսչին:

Մայիսի 28-ին բանկի թատրոնում երիտասարդ
երգչի պ. Վարդիկեանի օգտին տուած ներկայա-
ցումը շատ աշող էր արդիւնքի կողմից, որովհե-
տեւ թատրոնը լի էր հասարակութեամբ: Գրան
հակառակ կատարելով անաղութեան էր են-
թարկված այդ երեկոյեան ներկայացումը դերա-
սանուհիների և մի քանի դերասանների խաղի և
մանաւանդ պիէսաների ընտրութեան կողմից:
Ինչպէս երևում է, հայոց բեմի մի քանի երգ-
ված, բայց անշուրջ դերասանուհիները և դե-
րասանները իրանց անձուներ խաղով և աւելի ևս
անձուներ վողվելներով այնտեղ էր հասցնում, որ
կատարելապէս կը ստիպեն հասարակութեանը
այլ ևս թատրոն չը յանձնել, և ոչոքի համար
գաղտնիք չը պէտք է լինի, որ հայոց թատրոնի
մեղմեցնող գործին շատ են նպաստել այդ կարգի
խաղացողները, որոնք ձեռք չեն վերցնում հայոց
բեմից, և որոնք մինչև այժմ էլ ամենամանկայ
կերպով հարստանալում են հասարակութեան
համերգութիւնը և ճաշակը: Եւ եթէ այդ տեսակ
ներկայացումներին հասարակութիւն է զննում,
այդ, ի հարկէ, միմիայն բարեգործական նպա-
տակից զրգոված: Չնք կարող չը լինել, որ այդ
ներկայացման վատ տպաւորութիւնը մի փոքր
թուլացրեց դասէշտը, որի ժամանակ օր. Ա.
միքեան իր երգով ստացաւ բուռն ծափահարու-
թիւններ և մի փունջ, և ուրիշ մասնակցողները
պ. Միքեանեան բառական և զգացական հասա-
րակութիւնը իր երգած մի քանի կուպլէտներով,
որից օր աւելի համոզելով հասարակութեանը, որ
ինքը բառական ընդունակ կ'օժիկ է: Պ. Վարդի-
կեան մի քանի երգ երգեց: Գերասան պ. Աղա-
յեան այս անգամ մի ոտանաւոր կարգաց բառ-
կան աշողակ կերպով, թէ և այդ ոտանաւորի
թողած լաւ տպաւորութիւնը վերջումը թուլացրեց
ուրիշ ոտանաւորների կարգով. պ. Չմիւսեան, հայոց
բեմի այդ վեպերայն, նոյնպէս մի ոտանաւոր
կարգած: Հայոց դերասանների ներկայացումնե-
րը այդպիսով քանի դնում, այնքան էլ ան-
գրաւիչ և մինչև անգամ ձանձրացուցիչ են
դառնում, և մեր կարծիքով շատ բնաւոր է
հայոց ներկայացումների համար մի հանդիսակա-
նի նկատողութիւնը, որին երբ հարցնել էին թէ՛
«ինչն է ամենից լաւ հայոց ներկայացման ժա-
մանակ», նա պատասխանել էր՝ «անտարակտե-
ն»:

Շաբաթ, մայիսի 27-ին, իշխան կառավարչա-
պետը ուղևորվեց ղէպի թէլաւ, որտեղից պիտի
գնայ Սեփախ, ապա Լադոգալ, Զաքարիա և
Նուրի: Այդտեղից իշխան Գոնդուկով-Կորսակով
գնացաւ և Շուշի, Խան-քանդուկ, Գորիս, Տաթև և
Վանը: Այդ ծանապարհորդութեան զլխավոր
նպատակն է տեղական գորագնդերը տեսնել
իշխան կառավարչապետը յունիսի 10-ին այդ

Ծանապարհորդութիւնից կը վերադառնայ Թիֆ-
լիս, Եւլախի վրայով:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Քաղաքը պատրաս-
տութիւններ է տեսնում իր հաշուով հիւրասիրելու
կովկասի կառավարչապետ իշխան Գոնդուկով-
Կորսակովին, որը մօտաւորապէս յունիսի 3-ին
պէտք է Շուշի գայ»:

Երէկ ստացած «Новое Время» լրագրի №
4752-ի մէջ տպագրված է մի խմբագրական յօ-
դուած թիւրքաւայերի մասին: Արժէ կարգաւ այդ
յօդուածը:

Կիրակի, մայիսի 28-ին, թիֆլիսի քաղաքային
գումայի դահլիճում կայացաւ «Բրեհնից» փոխա-
դարձ ապահովութեան նորաստեղծ ընկերու-
թեան առաջին նիստը: Անգամ են գրված մօտ
90 հոգի, որոնցից ներկայ էին 73-ը: Այդ ժողո-
ւում մի քանի մանր-մուսն նկատողութիւններ
անելուց յետոյ, կատարվեցան ընկերութեան պաշ-
տօնական անձանց ընտրութիւնները: Վարչու-
թեան անդամ ընտրվեցան պ. պ. իշխան Կ. Բէհու-
թեան, Լոմիճէ և Վ. Մուրաֆեան. վերահսկող
մասնաժողովի անդամներ ընտրվեցան՝ պ. պ. Ա.
Փրիդոնեան, իշխ. Չելոկանով և ճարտարապետ պ.
Օղբորով: Ընկերութեան գործաւարկութեան համար
վճարվեց նշանակել 2,500 ռ. մինչև այս տարվայ
վերջը: Բոլոր պաշտօնական անձանց ամեն մէկը
պէտք է ներկայացնի գրաւական հազար ռուբլի:
Այնուհետեւ ժողովը փակվեց, և այս օրերս
նորից պիտի հաւաքվի ուրիշ հարցեր վճելու
համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, պ. Ս. Գուլամիրեանից ստա-
ցած հետեւեալ նամակը: «Տպագրելով իմ յայտա-
րարութիւնը, դուք մի խոշոր սխալ էիք արել.
«Արաքսի» իւրաքանչիւր գրքի զինը, փոխանակ
2 ռուբլի 50 կօպ. նշանակել էիք 1 ռ. 50 կօպ.:
Ուստի խոնարհաբար խնդրում եմ ուղղել այդ
սխալը, որպէս զի օր և է տարաձայնութիւն ա-
ռաջ չը բերի»:

Մեզ հաղորդում են, որ այս օրերս գիւղատն-
տես պ. Գեղեկի Գուլամիրեանի նահանգի Շորապանի
գաւառի խաղողի մի քանի այգիներում Փիլոկ-
սերա է գտել Գա, ի հարկէ, շատ ցաւալի նո-
րութիւն է, քանի որ սարսափելի բան կը լինի,
եթէ Գուլամիրեանի նահանգից այդ աղետաբեր հի-
ւանդութիւնը տարածվի և անցնի Կախեթի կող-
մերը:

Երէկ, երկուշաբթի, մայիսի 29-ին քաղաքային
տան դահլիճում կայացաւ կովկասեան Հայոց
Բարեգործական ընկերութեան անդամներ ընդ-
հանուր ժողովը: Ժողովին ներկայ էին ընդամենը
29 անդամներ: Ընկերութեան 1887 և 1888 տա-
րիներին հաշիւների ընթերցումից երես, որ ընկե-
րութեան վարչութեան ամենալիւսաւոր ուղադրու-
թիւնը դարձած է հեղ ղարոյական խնդրի վրա
և չքաւոր ուսանողներին օգնելու և այդ նպատա-
կով ծախված գումարը կազմում է ընկերութեան
հիւսնի մի երրորդ մասը: Հաշիւը հաստատվեց
ընդհանուր ժողովից: Տեղական վարչութիւնների
հաշիւները կարգաւոր ժամանակ, պ. Հ. Տէր-Մի-
քայէկեան նկատեց, թէ այդ հաշիւներից երկուս
է, որ գաւառական տեղական վարչութիւնները
ունեն անձեռնմխելի գումարներ, որոնք հակա-
ռակ կանոնադրութեան պահվում են նոյն իսկ
այդ վարչութիւնների ձեռքում և խնդրեց բացատրել
այդ անկանոնութեան պատճառը: Խորհրդի անգամ
պ. Ս. Չելոկանի բացատրեց, որ ընկերութեան
խորհուրդն արդէն վաղուց նկատել է այդ անկա-
նոնութիւնը և մի քանի անգամ պահանջել է տե-
ղական վարչութիւններից կատարել ճշգիւ կանո-
նադրութիւնը և ուղարկել թիֆլիսի խորհրդին
անձեռնմխելի գումարները, բայց տեղական վար-
չութիւնները անուշաղիւ են թողնում խորհրդի
այդ օրինաւոր պահանջը, ուստի խորհրդին մնում
է ղեմել աւելի խիստ միջոցներ կանոնադրու-
թիւնը կատարել տալու համար ժողովում կար-
գացվեց կովկասեան Բարեգործական ընկերութեան
Ախալցխայի բաժնի տեղական վարչութեան
նախաձեռնութեամբ բացվելի գրադարան-ընթեր-
ցարանի կանոնադրութիւնը, որը առաջարկված
էր ընդհանուր ժողովի հաստատութեան Այդ գը-
րագրարանի մասին ժողովի անգամ պ. Ս. Հա-
խումեան ասեց մօտաւորապէս հետեւեալը: Այդ-
պիսի մի գրադարան-ընթերցարան ունեցել է մի

ժամանակ և Շուշու տեղական վարչութիւնը.
Շուշու գրադարանը, որ արժէր ոչ պակաս քան
երկու հազար ռուբլի, զանազան հանգամանքներով
փակվելուց յետոյ, ծախվել է մի վաճառականի վրա
ութեան ռուբլով. այդ գումարեան մէջ կարող է մի
օր ընկնել և Ախալցխայի գրադարանը, ուստի
առաջարկում էր գրադարանի կանոնադրու-
թեան մէջ աւելացնել և այս յօդուածը: «Տեղա-
կան վարչութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր
տարի ընդհանուր հաշիւ հետ ներկայացնել գրա-
դարանի մանրամասն հաշիւը, ներկող դրան նոյն
տարվան ընթացքում ձեռք բերված բոլոր գրքերի
ցուցակը»: Երկար վիճաբանութիւններից յետոյ
հարցը քուէարկվեց և ընդունվեց ժողովից ձայ-
ների բաղմով: Պ. պ. Չելոկանի, Տէր-Վե-
րոնիեան և նախագահ պ. Նաւասարդեան ա-
ռաջարկեցին պարտաւորեցնել տեղական վարչու-
թիւնը նախահաշիւ հետ և դանաղան ժամանա-
կամիջոցներում կանխօրէն առնվելի գրքերի ցու-
ցակները առաջարկել թիֆլիսի կենտրոնական
խորհրդի հաստատութեան: Այդ առաջարկութիւ-
նը չընդունվեց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԱՎԱՐՈՒՄ

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանում երկաթու-
ղու գծեր անցկացնելու և տեղական արդիւնա-
բերութիւնները մշակելու խնդիրը դարձել է ա-
ռաջնակարգ խնդիր ոչ թէ միայն իրանի կա-
ռավարութեան համար, այլ և դրանով շատ հե-
տաքերված են օտար շատ դրամատները և
կառավարութիւններ: Նոյնպէս և «Պարսից պե-
տական բանկը» գործունէութիւնը, որի պայմա-
նագիրը, ինչպէս յայտնի է, կապված է բարձր
թէյների հետ, գլխավորապէս դարձած կը լինի
Պարսկաստանում եղած հանքերի մշակութեան
վրա: Իսկ այդ հանքերը շատ հարուստ են և բազ-
մատեսակ այն անագին տարածութեան վրա, որը
գտնվում է Շահի տիրապետութեան ներքոյ:
Մենք մի քանի տեղեկութիւններ կը բերենք այդ
հանքերի մասին: Համարենք մօտ գտնվող Էլվի-
դի լեռները յայտնի են նոյն իսկ շատ հին ժա-
մանակներից ոսկու և արծաթի հանքերով: Կա-
պարի անսպասելի հանքերը յայտնի են նոյն
իսկ պարսիկներին, որոնք մինչև այժմ ամենա-
չնչին մասն անգամ չեն կարողացել մշակել:
Նուրմանշիրի նահանգը յայտնի է իր առաւ պը-
ղինձի հանքերով: Խորասանի կողմերում երկա-
թի, պղնձի և կապարի հանքերը կազմում են այդ
երկրի ամենաառաջին հարստութիւնը: Պարսից ժո-
ցի մօտ գտնվող հանքերը վաղուց ի վեր եւրօ-
պացիների ուղադրութիւնը գրաւել են: Բացի այդ
բոլորից Թեհրանից ոչ հեռու կան բարածախի ա-
հաղին հանքեր, որոնք մեծ մասամբ ընկած են
ապարդիւն դրութեան մէջ:

Ահա այդ հարուստ հանքերի մշակութեան վրա
է դարձած այժմ Պարսկաստանում գտնվող եւ-
րօպական կապիտալի ոյժը և անկասկած կարճ
միջոցում այդ բոլոր հարստութիւնները հողի մի-
ջից դուրս բերվելով, կը գործադրվեն և կարտա-
հանվեն, տալով այդպիսով երկրին այն հարստու-
թեան անսպասելի աղբիւրը, որից պարսկական ստոր
քաղաքակրթութիւնը ի հարկէ օգտվել չէր կարող:
Այդ հանքերի մշակութեան հետ միասին կը բաց-
վեն երկաթուղու մի քանի գծեր, որոնք կապելով
երկրի զլխաւոր կենտրոնները հարևան երկրների
հետ, միջոց կը տան արդիւնաբերելու պարսից
երկրի ամեն տեսակ արդիւնաբերութիւնները:
Տեղական արդիւնաբերութեան արտահանութեան
այդ միջոցը, ի հարկէ, Պարսկաստանի կենանքի հա-
մար կը բանայ մի նոր և փառաւոր շրջան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

—Մայրաքաղաքը լրագրիներին վիճնայից հե-
ռագրում են մայիսի 22-ին հետեւեալը. «Իրաւո-
ւորական շրջաններից հաղորդում են, որ երբ
Վիլնէւ կայսրը Անգլիայից կը վերադառնայ,
աւստրիական կայսրը կ'ուղևորվի Բերլին: Մի և
նոյն ժամանակ Ֆրանց-Յոսէֆ կայսրը կը հրա-
ւերի Վիլնէւ կայսրին Մօրափա ներկայ լինելու
աւստրիական զօրքի զօրախաղերին և սպասում
են, որ գերմանական կայսրը կ'ընդունի այդ հրա-
ւերը: Զօրախաղի ժամանակ երկու միապետները,
շատ հաւանական է, որ կը հիւրասիրվեն կոմս

կալնոկի մաս նրա մօրավական լէտովից կա-
լուածքուն:

—Մաճարական լրագիրները խօսում են Հարա-
ւային Ռուսիայի բերդապահ զինվոր զորքա-
ցանկու անհրաժեշտութեան մասին, ասելով որ չէ
կարելի նախատեսել թէ ինչ վախճան կունենան
Սերբիայի անցքերը:

—Վիեննայից լրագիրներին հեռագրում են հե-
տեալը. «Բելգիայի անցքերով սաստիկ հետա-
քրքրվում է Վիեննայի մամուլը, որը այն կար-
ծիքն է յայտնում թէ Միլան պէտք է վերադառ-
նայ Բելգիայի և դիկտատուրա հրատարակէ»:

—Մայրաքաղաքի լրագիրներին Բելգիայից հե-
ռագրում են մայիսի 22-ից, որ Բուլգարիայում
այսօր սերբիացիները գնալուով են տեղա-
կան վարչութիւնների կողմից իրանց կրած ճնշ-
ւումների դէմ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԻԵՆՆԱ, 26 մայիսի: Գունաց թագաւորական
ընտանիքը երէկ անցաւ Վիեննայով՝ դէպի Պե-
տերբուրգ:—Իշխան Պետր Կարապետեան իր
ամուսնու հետ միասին դալիս է այստեղ ցետի-
նիէից: Այստեղի կիսապաշտօնական մամուլը
դաւրացած կերպով է խօսում գերմանական լրա-
գիրների յայտնած այն մտքի մասին, թէ Գերմա-
նիան չի դիմադրի Ռուսաստանի արշաւանքին
դէպի Կ. Պոլիս:

ՏԱՇԿԵՆԸ, 26 մայիսի: Խիւլայի Մուհամեդ-Բա-
հիմ խանը, ի յիշատակ կայսերական ընտանիքի
փրկութեան 1888 թվի հոկտեմբերի 17-ի վտան-
գից, վերադարձելով իր խանութեան մէջ հին ժամա-
նակներից մինչև այժմ գոյութիւն ունեցող այն
սովորութիւնը, որով յանցաւորներին զանազան
տանջանքների էին ենթարկում: Այդ կարգադրու-
թիւնը, ինչպէս խանին է ասել, արված է այն
նպատակով, որ իր հպատակները երկար ժամա-
նակ յիշեն Ամենակարող Աստուծո ողորմածու-
թիւնը դէպի Սպիտակ թագաւորը, և միշտ աղօ-
թեն Մեծ թագաւորի և նրա Օգոստափառ ըն-
տանիքի համար:

ՊԱՐԻՉ, 26 մայիսի: Այսօր գիտութիւնների
ճանաչման անդամ է ընտրված վիճուտ Վո-
գիւն, որը յայտնի է Ռուսաստանին վերաբերեալ
իր գրութիւններով և ուսաց դրողների թարգմա-
նութեամբ: Այդ ընտրութեանը յարակցիցան
համակրական ցոյցեր ի պատիւ Ռուսաստանի և
ուսաց գրականութեան:

ՆՕՎԻ-ՊԵՏԵՐԳՈՅԻ, 27 մայիսի: Այսօր ժամա-
նեցին այստեղ յունաց թագաւորը և թագուհին
Մեծ իշխան Պաւլէ Ալեքսանդրովիչի արքայադուստ-
րի Նաւանի: Ալեքսանդրովիչի արքայադուստ-
րի Նաւանի թագաւորի հետ միասին Սանտանից
բարձրատիճան հիւրերին և հարսնացուին ուղեկ-
ցում էր Մեծ իշխան Պաւլէ Ալեքսանդրովիչ: Կա-
յարանում հիւրերին ընտանեբար ընդունեցին
թագաւոր կայսրը, թագուհի կայսրուհին, թագա-
ժառանգ Յէսարէվիչը, Մեծ իշխանները և իշխա-
նուհիները: Քաղաքային վարչութիւնը արժաթէ
սկտեղի վրա աղ ու հաց մատուցեց: Կայարանից
ճանապարհ ընկան Ալեքսանդրովիչ և իշխան
հանդիսարար կառքով կայսրուհին յունաց թագու-
հու, փեսացուի և հարսնացուի հետ միասին. մի
ուրիշ կառքով գնում էին կայսրը թագաւորի
հետ միասին, ապա թագաւորանոց Յէսարէվիչը
յունաց թագաւորանոցի հետ միասին Գունաց
թագաւորական ընտանիքի համար պատրաստված
է մի նոր պալատ ծովի ափին Ալեքսանդրիայում:
Այսօր Մեծ պալատը Պետրովսկի դահլիճում կու-
յացաւ ընտանեկան ճաշ 37 հոգու համար:

ՊԵՏԵՐԳՈՅԻ, 27 մայիսի: Պետերբուրգի վա-
ճառականները և առևտրականները յայտնեցին
իրանց միահամուռ ցանկութիւնը՝ յաւերժացնելու
համար Օգոստափառ ընտանիքի հրաշքով փրկվե-
լը 1888 թվի հոկտեմբերի 17-ի կայսերական զը-
նացքի խորտակման ժամանակ, դադարեցնել ա-
ռևտուրը և ազատել գործակալներին պա-
րագրութիւններից կրակի օրերը: Այս բանի մա-
սին ամենանպատակ վեկուցման վրա Նորին
կայսերական Մեծութիւնը դրեց՝ «Այդ շատ մի-
թարական և ցանկալի է խորին հորհակալու-

թիւն ենք յայտնում նրանց այդ բարի սկզբնաւո-
րութեան համար»: 6-րդ զօրաբաժնի հրամանա-
տար գեներալ Գորէմիլին նշանակված է իրկուտ-
սկի գեներալ-Մանգապետ և իրկուտսկի զին-
ւորական շրջանի զօրքերի հրամանատար: Մեծ-
իշխան Պաւլէ Ալեքսանդրովիչի նշանածի՝ արքա-
յադուստրի Ալեքսանդրա Գեորգիևնայի հանդիսա-
ւոր մուտքը Պետերբուրգ կը կայանայ յունիսի
3-ին, պառկադրութիւնը կը կատարվի յունիսի
4-ին: Նոյն օրը Չմբային Պալատում ճաշ կը լի-
նի, և ապա պարահանդէս:—Երէկ Մեծ իշխան
Ալեքսանդր Միխայլովիչ վերադարձաւ իր աշ-
խարհագրային նաւագնացութիւնից «Ռինդա» նա-
ւով:

ԿԻԵՎ, 27 մայիսի: Չերնոգորիական Նիկոլայ
իշխանը Միլիցա իշխանուհու և Մեծ-իշխան
Պետր Նիկոլայովիչի հետ միասին այսօր այցելե-
ցին անապատը և միտրոպոլիտ Պաւստին: Մեծ-
իշխանուհի Ալեքսանդրա Պետրովնայի պալատում
մեծ հիւրերին ներկայացաւ սլավոնական ընկե-
րութեան պատգամաւորութիւնը և մատուցեց
չերնոգորիական իշխանին այդ ընկերութեան
պատուաւոր անդամի դիպիւմը: Երկուսն էլ 7 1/2
ժամին իշխան Նիկոլայ Միլիցա իշխանուհու
հետ արագընթաց գնացքով ճանապարհ ընկաւ
դէպի Չերնոգորիա:

ԲԵՂԳԻԱ, 27 մայիսի: Հոգեպաշտօնի սպաս-
վում է միտրոպոլիտ Միխայլի վերականգնման
վերաբերեալ Նովոարտակի հրատարակումը: Այդ
օրը նա կը կատարէ առաջին ժամատուրութիւնը
մայր-եկեղեցում: Մրաօվիչ և եպիսկոպոսները
ինքնակամ հրաժարական են տալիս: Նրանք այ-
սօր կը ներկայանան միտրոպոլիտ Միխայլին և
կը յայտնեն, որ թողնում են իրանց աթոռները
օրինական առաջնորդների համար: Վերականգն-
ման հրովարտակը ստորագրված կը լինի վաղը:
—Գարաշանին զանգատի պատճառով, դատա-
րանի երկրորդ բաժանմունքը վճռեց արձակել
նրան բանտից: Վճիռը պատճառաբանված է
նրանով, որ սպանութիւնը առանց նախամտա-
ժած մտադրութեան է կատարվել: Դատաւարան-
կան ընդելը վճռեց բանտարկել Գարաշանին
մի այլ գործի համար, այն է՝ երկու անձանց
թրով վրարարելու և կուրի օրը պրէֆիկտին հիւրա-
նոցի ներսում պատանդ բռնելու համար: Առա-
ջաւորներից բաղկացած դատարանի վճռի դէմ
կը դանդաղով արդարադատութեան մինիստրը:

ՊԵՏԵՐԳՈՅԻ, 28 մայիսի: Կառավարչի սենա-
տին տուած Բարձրագոյն ուկազով հրամայված է,
զինւորական ծառայութեան կանչել 1889 թվին
1) կայսրութեան բոլոր տեղերում, ուր տարած-
ված է զինւորագրական կանոնագրութեան գոր-
ծողութիւնը, զօրաբանակը և նաւատորմը լրաց-
նելու համար, 255,000 մարդ, հաշուով դրա մէջ
և նրանց, որոնք առաջիկայ զինւորակոչի ժամա-
նակ կը ներկայացնեն զինւորական ծառայու-
թիւնից ազատ կացուցանող առաջիկայ ժամանա-
կի բեկուտային տուսեր և 2) թերեքի և կուրա-
նի շրջաններին և Անդրկովկասի տեղական ազ-
գաւանակութիւնի՝ կովկասում առանձին կազմվող
զօրաբանակի համար 21,400 մարդ, հաշուով դրա
մէջ և այն 100 օտ-մասնատկաններին, որոնք
նշանակվում են թերեքի կողակների զօրքի ծա-
ռայութեան մէջ:

ՊԱՐԻՉ, 28 մայիսի: Չերնոգորիական ինտենդանտի
օգնական Ռէյկերտ, որը առաջ Բուլանժէի կարի-
նետի անդամ էր, այսօր գիշերը ձերբակալվեցաւ
բարձրագոյն ատենին հրամանով: Պատեհական
լրագիրները ասում են, որ երէկ կատարված տը-
նային խուզարկութիւնների ժամանակ գտնված
են կարիւր թղթեր: Գրա հակառակ բուլանժա-
կան լրագիրները հաստատում են, որ գտնված
թղթերը ոչինչ նշանակութիւն չունեն:

ԲԵՂԳԻԱ, 29 մայիսի: Այսօր առաւօտ հրա-
տարակվեց միտրոպոլիտ Միխայլի և երօնիմ ե-
պիսկոպոսի վերականգնման վերաբերեալ հրովար-
տակը: Իրանց հրաժարականի առիթով տուած
խնդրքների մէջ Մրաօվիչ և եպիսկոպոսներն ա-
սում են, որ հեռանում են աչքի առաջ ունենա-
լով պետութեան շահերը, եկեղեցու արժանաւո-
րութեան և խաղաղութեան համար և թողնում
են ամբողջ աշխիւ արժանաւոր հոգեւորական-
ներին: Այսօր պատարադը շարունակվեց մօս-
չորս ժամ: Եկեղեցում էին տեղաւորվում աղօ-
թողները. ժողովրդի մեծ բազմութիւն լցրել էր
մայր-եկեղեցու հրապարակը: Ներկայ էին թա-
գաւորը, ուսաց ներկայացուցիչը, ինամակա-
նները և մինիստրները:

ՊԱՐԻՉ, 29 մայիսի: Անդուլէից հաղորդում

են, որ բուլանժանների յայտարարած համար նշա-
նակված ժողովը և բանկէտը ոստիկանութիւնին
արգելեց: 24 մարդիկ ձերբակալվեցան Վեցցէ
Գէրուէզի, կեցցէ Բուլանժէի աղադակների հա-
մար, ապա կալանաւորվեցան՝ Գէրուէզի, Լազերի,
Լէզան և Ռիշար, կալանաւորման դէմ բողոքելու
համար: 4,000 հոգուց բաղկացած ամբողջ ապս-
տամբեց ոստիկանութեան դէմ և դիմում է երկ-
րի դատաստանին: Բերդապահ զօրքին հրամայ-
ված է պատրաստ լինել:

ԲԵՂԻՆ, 29 մայիսի: Երէկ այստեղ հասաւ
պարսից Շահը, որին դիմաւորեցին կայսրը և
պրինցիները:

Ս. ՊԵՏԵՐԳՈՅԻ ԲՈՐՍԱ

Մայիսի 26-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ—	96	50
Բերլինի վրա 100 մարկ —	47	20
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38	22 1/2
Ռուկի — արծէ —	7	71
Մաքսային կուպոններ —	154	50
Արծաթ —	1	13
Բորսային դիվիդենդներ —	5 1/4	և 6 1/2
Պետական 5% տուս 1-ին շրջանի	98	75
— — — — — 2-րդ —	98	75
— — — — — 3-րդ —	98	75
— — — — — 4-րդ —	98	75
— — — — — 5-րդ —	98	75
— — — — — 6-րդ —	98	75
Նոր 4% —	84	87
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	98	75
— — — — — 2-րդ —	98	50
— — — — — 3-րդ —	98	50
Ներքին 5% առաջին փոխառութ.	270	50
— — — — — երկրորդ —	244	75
5 1/2% ընտա. — — — — —	103	—
Ոսկեայ ընտա. — — — — —	154	—
Եօթնրորդ կոնսոլիդ. փոխառ.	139	25
Նոր երկաթուղային ընտա. —	99	—
5% գրաւական թղթեր կալուած.		

փոխ. կրեդ. ընկ. մտա.	138	50
— — — — — թղթադ.	94	—
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի	98	25
Գիւղական բանկի	102	50
6% գրաւ. թղ. Թիֆլիսի — 27 և 43 տ. —	—	—
— — — — — Բուլանժի — 18 և 43 տ. —	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլի-		
գացիներ	95	—
Մոսկովայի քաղաք. օբլիգացիներ	94	25
Օղէսայի — — — — —	95	75
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. —	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը		
թուլ է:		

ՍՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Թիֆլիսի, Հայաստանի Բարեգործական ընկերու-
թեան վարչութեան: Ամսիս 26-ին մեզ ուղարկած
հաշիւը, որ խնդրում էր տպագրել «Մշակի» մէջ,
չի տպագրվի, և այդ էլ իբրեւ վարձատրութիւն
այն քաղաքավարութեան, որով դուք մի և նոյն
հաշիւը ուսաց լրագիրներին ուղարկում էք մի
շաբաթ առաջ, իսկ հայոց լրագրութեան մի շա-
բաթ յետոյ:

ԲԱԳՈՒ, ԱՆ. Խմբագրութիւնը ոչ մի գրադու-
թիւն չէ անում թղթակցութիւնների և յօդուած-
ների վերաբերմամբ: Փոքրիկ յօդուածները և
թղթակցութիւնները չեն վերադարձվում, եթէ
մինչև անգամ ուղարկողները փաստի ծախս էլ
ուղարկած լինեն:

Ճամանակաւոր Խմբագիր Թ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակել ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒՄՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ա մ ի ն օ Ր

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ը

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վերաբուժական, (և ատամնացուի), սիֆիլիսի և աչքի ց. բացի
կերակի:
ՐՈՒԿԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայից և կանանց ց.
ԿԻՆԻՔԻՆԿ ԻՍՍԼԱԿԵԱՆՑ—11 1/2—12 ժ. կանանց և երեխայից ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻՆ—11—12 ժ. ակնաբ. կոկորդի, քթի և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայից ց. բացի կերակի:

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

ԳԱՐՈՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի:
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայից և ջղային ց. (էկեղրոտերապիա):
ԲԵՆԿԵՎՍԿԻՆ—6 1/2—7 1/2 ժամ.
Հիւանդանոցում է մասկաբարձուհի Մօզեր և Երևանցի ան
Վճար—50 կ: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի վերադառնալ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

«ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԲԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ» ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է հասարակութեան, թէ ընդունում է
տպագրութեան համար ինքնուրոյն և թարգմանական գրաւոր երկեր: Կը տպագրվեն
միայն այն երկերը, որոնք յարմար կը զատվեն խմբագրական մասնագիտութիւնը:
Հեղինակների առաջարկած պայմանները գրաւոր պիտի լինեն: Խմբագրական մաս-
նագործիկը որոշմամբ տպագրութեան անյարմար զատված ձեռագիրները յետ կուղարկ-
վեն հեղինակներին:

Երանց անունը յայտնել չը կամեցող հեղինակները կարող են որ և է կեղծ անու-
նով և կամ նշանաբանով ստորագրել իրանց գրաւոր վաստակները, իսկ հասցեն (ըստ
կարելւոյն մանրամասն) պարտական են ուղարկել առանձին ծրարով ընկերութեան
վարչութեանը:

Ընկերութեան վարչութեան հասցեն է. Тифлисъ, Правление Тифлискаго Обще-
ства издавнiя армянскихъ книгъ.

3—3



Въ редакціи газеты „МШАКЪ“ прода-
ются слѣдующія брошюры: 1) „Экономиче-
ское Положеніе Турецкихъ Армянъ“, публич-
ная лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм.
А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Eco-
nomische Lage der Armenier in der Türkei,
ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni,
übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien,
ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über-
setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающие получить бро-
шюры, благоволятъ присылать по 30 коп.
почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшахъ“,
или Tiflis, Redaction „Mschak“. (b)